# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

## 28.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի

ք. Երևան 18.01.2019թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Արման-Թաման>> ՍՊԸ -ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Մովսիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 28.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.2 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կատարողի կողմից Պայմանագրի N1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2019թ. ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների գինը սահմանել **2 263 400 (երկու միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր)** ՀՀ դրամ՝ ներառյալ Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<Արման-Թաման>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Գավառ մ/ճ
Հ/Հ 11500844540100
ՀՎՀՀ 08417115

Տնօրեն՝

_______________ Մ. Մովսիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
*28.04.2017թ. կնքված ծառայությունների մատուցման*
*N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի*
*18.01.2019թ. կնքված N 2 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
**(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 03)**

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| ՀՀ Լոռու մարզի ք.Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն | - | 113 100 | 113 100 | 905 300 | 905 300 | 905 300 | 1 810 700 | 1 810 700 | 1 810 700 | 2 263 400 | 2 263 400 | 2 263 400 | 2 263 400 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

------------------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<Արման-Թաման>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Գավառ մ/ճ
Հ/Հ 11500844540100
ՀՎՀՀ 08417115

Տնօրեն՝

------------------- Մ. Մովսիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.